


# Կայանատեղի վճարներ Ուղեցույց




# Կայանատեղի կայանման վճար




Կայանատեղի կայանման վճար կատարելու նպատակով անհրաժեշտ է մուտք գործել «Վճարել» բաժին և սեղմել «Ավտոկայանատեղի» կոճակը, որից հետո ընտրել «Կայանման վճար» տարբերակը:

Անհրաժեշտ է մուտքագրել այն մեքենայի համարանիշը, որի համար կատարվում է կայանատեղի վճարը, սեղմել «Շարունակել» կոճակը, ընտրել կայանման ցանկալի տևողություն և գումարի/միջնորդավճարի գանձման հաշիվը, որից հետո հաստատել վճարումը:



## Կայանատեղի տուգանքի վճար



Կայանատեղի կայանման տուգանքի վճար կատարելու նպատակով անհրաժեշտ է մուտք գործել «Վճարել» բաժին և սեղմել «Ավտոկայանատեղի» կոճակը, որից հետո ընտրել «Կայանման տուգանք» տարբերակը:

Տուգանքը վճարելու նպատակով անհրաժեշտ է մուտքագրել տուգանքի Pin կոդը կամ մեքենայի համարանիշը և տեխ. անձնագիրը, որից հետո անհրաժեշտ է կատարել տուգանքի որոնում: Տուգանքի առկայության դեպքում ծրագիրը կցուցադրի տուգանքի մանրամասները, որից հետո անհրաժեշտ է ընտրել վճարվող գումարի/միջնորդավճարի գանձման հաշիվը և կատարել վճարման հաստատում:

